

տեղութեան հայեացքով: «Եւ, ինչեր էք
ասում, հէր օխնածներ, մեր հոգեւորական-
նէրից ի՞նչ է սպասելու, և ո՞վ կ'ցանկա-
նայ նրանց օգնել էլ գործի մէջ, ո՞ր են
մեր մէջ մարդիք, որ կարողանան մի ամա-
գիր շարունակ քանի մի տարի հրատարա-
կել, և վերջապէս ո՞վ կայ մեր մէջ մէկ ու-
սումնական Հայ, որ կարողանայ շատ քիչ
մարդավարի բան գրել, և ո՞վ հավէս ունի
այժմեան ժամանակ այնպիսի բաներ կար-
դալու: Հա, շարունակումն պէսսիմիստ-
ները. կարելի է ստորագրել ստանալու
,,Արարատ,, միայն Եջմիածնու անունը
վեր չձգելու համար, ևս առաւել որ էժան
գնով է հրատարակվում:»,

Եւ մեծ ուրախութեամբ այստեղ վի-
ճելու եմ այդ հայեացքի հետ, փաստերով
ապացուցանելով նորա վերջին աստիճան
գարշելի, կոյր, չարախնդացական բնու-
թիւնը: Գորա համար բաւական կ'լինի,
եթէ ես վեր առնեմ քանի ամսատետրակի-
ներ ,,Արարատի,, ուսկից կ'տեսնուի
այն մոռւորական և բարոյական արթնու-
թիւնը մեր ազգի մեծ մասի մէջ, որ մի-
այն լինելու է հիմն յառաջագիւծութեան:
Իսկ այն համոզմունքը, որ սուտ է, պէսսի-
միստների կեղծաւոր կարծիքը և վերջի-
նըն հերքելու նպատակաւ ես կամենումեմ
տալ նիւթ ,,Արարատին,, իմ այս տկար
աշխատութիւնովս:

(Պիտի շարունակվի):

Ահնէ+էրէ՛՛ Արթուր-նի

ՓՈՔԻ ԱՍԻԱՅԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՆԻՒՄԻՍԱՅԻՆ
ԱՓՐԻԿԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ:

(Ե. ԲԱՆԻ ՏԱՅՐԵԼ):

Միայն ամուրիները կը բնորոշում անց-
նում են ամբողջ երեկոն, ընտանեաց տե-
րը սակաւ է լինում այն տեղ: Սուրճ,
արաղ, թղթախաղ և բիւրրղը քաղա-
քականութեան հետ Յոյնի զբաղմանց մի-
ակ առարկան են: Արեւնորում ծագում
են խռովութիւններ, ֆիլէլիններ ժողով-
ներ, տարածում են հեռագրալուրներ և
պամֆլէտներ (զրգուիչ բովանդակութեամբ
զրքոյկներ): այս տեղերում պարզ երե-
ւում է յունական բնաւորութիւնը, որ
շատ անգամ անպատուութիւն է պատ-
ճառում նորան: Յոյները, արեւելքի բո-
լոր քրիստոնեաների նման, սիրում են ա-
ռաւել շատ խօսել, քան թէ գործել:
Իայց պէտք է ասել, որ ամուսնացեալ
Յոյնը, որ առհասարակ բարի ամուսին և
հայր է իւր ազատ ժամերը մեծ մասամբ
անցնում է ընտանիքի հետ: Ըստ հագիւ-
ն է պատահում, որ երիտասարդ Յոյնը լա-
կրթեալ լինի: Չէ կարելի ասել, որ նա
բարոյական է, բայց շատ փոքր է պատա-
հում, որ Յոյնը բարոյականութեան մա-
սին հասուն հասկացողութիւն ունենայ.
ամուսնացած օրից, նա նոյն հեշտութեամբ
թողնում է իւր գնացած մոլորութեան
ճանապարհը, ինչ դիւրութեամբ որ ըն-
կել էր նա սկզբում նորա վերայ: Ամուս-
նացած ժամանակը նա չէ զգընում, որ իւր
ամուրի կեանքը վատ է անցել և չէ գնա-
հատում ընտանեկան կեանքի բարիքները:
Այնուհետեւ նորա մտածմանց առարկա-

ները երեք են—գերդաստանի կապը, քաղաքականութիւն և փող: Յոյնը թէ լաւ և թէ վատ լինի կրթեալ, թէ ամուրի և թէ ամուսնացեալ չէ սիրում ոչ հին և ոչ նոր դրականութիւն, նա կարգում է սիրով լրագիրներ և պամֆլէտներ: Աորա ընթերցանութեան առարկաները միայն վերոյիշեալները են. իսկ պատմութիւն, բանաստեղծութիւն, արուեստներ, գիտութիւններ նորա համար ստեղծուած չեն: Իւր բնակութեան երկրի, կրօնքի, սովորութիւնների և դրացի մահմետականների օրէնքների մասին նա հասկացողութիւն չունի և չէ կամենում ունենալ: Աս գիտէ մի քանի պատմութիւններ տաճիկների նեղացնելու և իւր ազգի մի քանի նահատակների մասին, որ կարգացել է պամֆլէտների մէջ: Աւրուպայի քաղաքականութեան մասին շատ փոքր տեղեկութիւն ունի. իսկ կեանքի և գիտութեան միւս երևոյթների մասին նա ոչինչ հասկացողութիւն չունի: Այս ընդհանուր կանոնից բացառութիւն կազմում է Յոյն հոգևորականը: Ամուրի հոգևորականները, արեղաները որոնց միջից ընտրվում են և բարձրաստիճան հոգևորականները—յարգանք են ներշնչում մարդուս մէջ. ամուսնացեալ հոգևորականները, քահանաները, թէպէտ հիմնուոր կրթութիւն չունին, բայց շատ աշխատասէր և ազնիւ մարդիկ են: Յոյները չեն ծածկում իւրեանց ունեցած կրօնական ատելութիւնը դէպի միւս ազգերը, բայց իւրանք ևս ջերմեռանդ բրիտոնեաներ չեն. նոքա առ նախախնամութիւնը այն ջերմեռանդ հաւատը չունին, որով յայտնի է մահմետականը. Յունաց եկեղեցիներում յա-

ճախ պատահող անուշադրութիւնը, թերահաւատութիւնը և զանազան անկարգութիւնները միանգամայն զանազանում են նոցա Տաճիկից և Արաբից, որոնք խորին յարգանք և սրբութեամբ են վերաբերում դէպ իւրեանց մզկիթները. հեղինակի ասելով Յոյնի համար կրօնը միաւորութեան կապ է համարվում և կարծես թէ նոցա համար հոգեկան նշանակութիւն չունի ոչինչ, թէպէտ Յոյնը իւր կրօնի համար միշտ արիւն կ'թափէ, որովհետեւ նա իւր կուսակցութեան դրօշակը է կազմում:


Յոյները երկրագործութեան և այգեպանութեան մէջ արեւելքի քրիստոնեաներից ամենից յետ մնացած ազգը են: Աոքա շատ սակաւ են մշակում երկիրը, այն ևս վատ. այն ինչ սիրում են նաւագնացութիւն և լաւ նաւավարներ են. նոքա հիւսնեղործութեան մէջ ևս Տաճիկներից ցած են. բայց շատ առաջ են գնացել քարտաշութեան և կալատոսութեան մէջ. արեւելքում իւրեանց դէմ ախոյեաններ չունին. կարելի է Ազգիպտոսի զպոլիները կարողանան հաւասարիլ նոցա: Յոյների գլխաւոր պարապմունքը վաճառականութիւնը է. բայց պէտք է ասել, որ Փոքր Ասիոյ Յոյները վաճառականութեան մէջ հաւասարմութիւն չունին, այս պատճառով էլ ֆիասներ են կրում: Յոյն վաճառականը բազդի վերայ յոյս դնելով մեծամեծ գործերի է ձեռք զարնում, որ կամ յանկարծ հարստանայ և կամ աղքատանայ. նա չայի կամ Տաճիկ չըմհայեաց զգուշութիւնը չունի: Տնտեսութեան և հիւրընկալութեան համար նոքա շատ ժրլատ են. բայց սաստիկ սիրում են ամեն

բան ինչ² միայն աչքի է ընկնում և փայլում, ինչպէս՝ նոր տներ, գեղեցիկ զգեստներ, թիթե բայց փայլուն կարասիք էյլն: Միայն մի բան Յոյներին պատիւ է բերում՝ այն է՝ ժողովրդի մէջ լուսաւորութիւն տարածելու համար ամենամեծ գումարներ անգամ խնայում չեն. նոքա շատ մեծամեծ ուսումնարաններ ունին և լաւ ուսուցիչներ են տալիս ուսուցիչներին: Բայց ուսումնարաններում դասատուութիւնը շատ թերի է, զրիթէ միայն եւրոպական նոր լեզուները և փոքր ինչ հին և եկեղեցական պատմութիւնը են կազմում դասատուութեան առարկաները: Տեղական պատմութիւնը, ճիշդ գիտութիւններ, զբաղմունքներ են. միանգամայն բաց են թողնում: Բազմաքններում հարուստ Յոյների միակ պարապմունքը վաճառականութիւնը է. բայց մի փոքր մասը ևս արքունական ծառայութեան մէջ է: Մեծ մասամբ մաքսատան և ելեմարի պաշտօնէի կառավարչական բաժնում. թուրքերի նման կաշառակերներ են: Արկրի միջին մասերում բնակող Յոյները—աղքատ երկրագործներ են. ծովափնեայ Յոյները պարապում են ձկնորսութեամբ, նաւագնացութեամբ և արդիւնալ ապրանքներ (կոնտրաբանդ) վաճառելով: Յոյների սիրելի պարապմունքը տների ստորին յարկերում պանդոկներ և գինեատուններ պահելը է. պանդոկներում, հիւրանոցներում և այլ նոցա նման տեղերում վաճառականութեան իրաւունքը կարծես միայն Յոյներին է տուած: Ըմէն տեղ, ուր Յոյներ կան, կան նմանապէս և այդպիսի շինութիւններ: Արովհետեւ այդ շինութիւնները տաճիկների և արաբների համար խորթ բա-

ներ են, այն ինչ Տաճկաստանում և մանաւանդ Ադիպոսում եղած Աւրոպացիների համար ապաստանութեան միակ տեղեր, ուստի զարմանք չէ, որ այս վերջիններս Յոյներին Տաճկաստանում լուսաւորութեան տարածող են համարում. այն ինչ տարաբաղդաբար նոքա այս կողմից բոլոր արեւելեան քրիստոնեաներից բացառութիւն են կազմում: Յոյների ձեռին է նոյնպէս թարգմանութեան պաշտօնը. նոքա արեւելքում Աւրոպացիների թարգմանները են: Յոյների բարոյականութեան բոլոր սկզբունքները կարծես շատ լաւ ամփոփուած է յետագայ խօսքերում՝ «դուն բոլորին կ'իսափես և բոլորեքեան քեզ կատեն»,:

Յեղական կողմից Յոյները ասիական քրիստոնեայ ազգերի խառնուրդ են, որոնք կրթութել են բիւզանդեան իշխանութեան ներքոյ: Փոքր Լսիայում նոքա թուով մի միլիօն են: Առաջ տաճկական կայսերութիւնից, գոնէ խօսքով, միշտ անբաւական են: Այս սաւորութեամբ Աւրոպացւոց նմանելու նոցա ունեցած ցանկութիւնը մեծ քայլ չէ կարելի համարել. նոքա իւրեանց ձեռին չ'ունին երկրի ոչ պատերազմական և ոչ զբաղմունքներ:

Վերոյիշեալ աշխարհագրական սահմանների մէջ եղած արեւելեան քրիստոնեաներից բազմութիւնը Հայերը են: Առաջ բնակութեան կենդրոնները են Աստանդնուպօլիսը և Ենատօլեան, մանաւանդ վերջինի արեւելեան մասը, բայց նոքա բնակում են Եսոբեստանի բոլոր քաղաքներում, Իրանում և Ադիպոսում: Եսոբեան թէ բառօն Ռօտշիշդը ասել է «Վաճառականաց ժողովարանում (բիրժա)»



Հայկական Եկեղեցի

փակեցէ՛ք բոլոր Հայերին և Հրէաներին, և կէս ժամից յետոյ, Հրէաների բոլոր հարստութիւնը Հայերի ձեռքը կանցնի, և Հայերի գլխաւոր պարապմունքը են երկրագործութիւնը, օրական աշխատանքը և Հաշիսաւ-Լի-Նը: Երկրագործութիւնը միշտ Հայերի գլխաւոր պարապմունքը է եղած. այս ազգի $\frac{2}{3}$ մասը մեծ յաջողութեամբ պարապում է երկրագործութեամբ: Նոցա գիւղերում սահմանադրական կառավարութեան սերմեր կան: Հայ շինականները, որոնք Յոյների նման վառվռաւուն և կրակոտ չեն, չեն աշխատում ծովի ափերին կամ մեծ քաղաքներում կենալ: Տան օջախի առաջ նորա ընտանեկան խօսակցութիւնը կարծես վերջ չունի. բայց այս մարդոց խօսակցութիւնը Յոյների նման միայն քաղաքականութիւնից չէ: Իհարկէ սոքա ևս խօսում են օրուայ մէջ պատահած նորութիւններից, բայց միևնոյն ժամանակ այստեղ խօսակցութիւններ են լինում զրականութիւնից, պատմութիւնից, կրօնից, և օտարականը լսելով զգում է, որ այդ ծանրաբարոյ մարդիկների մաքերը ծանրակշիռ հարցերով են զբաղած: Այդ մարդիկ պարապած են տեղական գործերով և հարցերով, երկրի կառավարութիւնը բարելաւայնելով և Նւրոպական գիւտերը, շոգին, էլեքտրականութիւնը ևն. նոցա դատողութեանց հետաքրքիր առարկաները են դարձած: Այդ դատողութեանց մէջ ի հարկէ կան և շատ սխալներ, բայց միևնոյն ժամանակ նոցա մէջ երևում է նոյնպէս Հայիրընաճին հանձարը և խելքը: Հայ շինականը ուրիշ ոչինչ կամենում է, այլ միայն շինական մնալ: Հայը լաւ մշակ է, նորա ձեռ-

քում դրամագլուխը անգործ չէ մնում, այլ ամէն կերպով աշխատում, բազմապատկել: Հայի երեսի մուրը Հաշիսաւ-Լի-Նը է. Հայը սարսափելի մեծ տոկոս/ը է առնում իւր դրամի համար: Արօնական կողմից Հայերը Յոյներից շատ քիչ են զանազանվում. բայց սոքա առաւել ջերմեռանդ քրիստոնեաներ են և Յոյներից աւելի փոքր են ատում միւս քրիստոնեաներին: Հայերի հոգեւորական դասը, ընդհանրապէս ասելով, շատ յարգելի է, բայց պէտքէ ասել, որ այս դասը իւր բարոյականութեամբ և կրթութեամբ շատ փոքր է զանազանվում ժողովրդի միւս դասերից: Աշխարհականները աւելի սակաւ թեթեամիտ են քան թէ Յոյները, աւելի փոքր են անցնում իւրեանց ժամանակը պարապօրհութեամբ և զուարճանքներով: Նոցա հիւրընկալութիւնը արդարեւ արեւելեան է այսինքն թէ իւր հիմունքով և թէ արտաքին ձևով ազնիւ է:

Համեմատաբար ասելով, Հայերը լուսաւորութեամբ յետ մնացել չեն: Նոքա մեծամեծ ուսումնարաններ են հիմնում և շատ լաւ պահում: Այդ ուսումնարաններում կրթութիւնը շատ հիմնաւոր կերպով է լինում և միանգամայն համապատասխանում է արեւելքի պահանջներին. այդ ուսումնարաններում առանձին ուշադրութիւն են դարձնում հայերէն զրաբառ լեզուին, պատմութեանը և զրականութեանը, հիմնաւոր կերպով ուսուցանում են տաճկերէն և երբեմն բաւականին թեթեալ ֆրանսերէն և անգլիերէն. չեն ուսուցանում ո՛չ արաբերէն և ոչ պարսկերէն: Հայերից շատ քչերը իւրեանց ուսումնարաններից յետոյ շարունակում են իւրեանց

ուսումը բարձր ուսումնարաններում, բաց ի վաճառքից՝ ուր գնում են ուսանելու աստուածաբանութիւն և պատմութիւն, շայերը ազոտական արհեստների ճաշակ չունին: Վիզիքական, մտածողական և ազատական արհեստների կողմից Գանդալ ժողովուրդ են: Աոցա ճարտարապետութիւնը կոպիտ է: Աոցա եկեղեցիները թէպէտ մեծ և ամրաշէն են, սակայն ոչինչ գեղեցկութիւն չունին և միանգամայն յոյն — բիւզանդական հին և նոր շինութեանց գեղեցկութիւններին հակադիր յատկութիւն ունին: Մի բանում միայն շայերը Յոյներից բարձր են — իւրեանց աների շինութեամբ: Յոյներ աշխատելով Ֆրանսիական կամ իտալական ճարտարապետութեանը նմանեցնել՝ միանգամայն փչացնում են իւրեանց աները. իսկ հարուստ շայը իւր տունը շինում և զարդարում է միանգամայն տաճկական ճաշակով, որ համապատասխանում է կլիմային և շրջապատող բնութեանը:

Փոքր Ասիոյ շայերը Աոստանդնուպօլսի շայերի հետ թուով 3 միլիօն են:

Ե. Գաղաղէան

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՐԿՍԵՌ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ

ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ:

«Մէլէ է Կոստանդնուպօլսի Տէմալ:

Առ. 4—7:

Ե.

Մեր շայկազուն մանուկների դատարակութիւնը թէև լեզուները բացուած օրից սկսելու է, (ինչպէս որ Աւրոպացւոց կրթեալ մայրերից կրթվում են այնպիսի

Թոթովախօս մանուկներ) բայց գոնեւ չորս կամ հինգ տարեկան հասակիցն էլ սկսում դարձեալ բաւական օգուտ կը բերէ նոցա մտաւոր զարգացման. մինչև որ մեր Ազգն էլ Աւրոպացւոց նման պատրաստէ ուսեալ և կրթեալ մայրեր, բարեկարգ ուսումնարանաց շնորհիւ:

Բ.

Մի գեռահասակ մանուկ երբոր նոր մըտնէ ուսումնարանի նախակրթարան, հարկաւ ուսուցիչը պէտքէ վարուի նորահետ ինչպէս ընտանի բարեկամ, զուարթ դէմքով. մինչև որ ընտելանայ նորա բնաւորութեան հետը. այն բաների վրայ խօսի՝ որոց անունները արդէն գիտէ նա. և սկսի միլենոյն բանի վրայօք հարցու փորձանել, և ամէն պարագաներով հասկացնել. ի՞նչպէս. «գրասեղանը ի՞նչով են շինում, ո՞վ է շինում. փայտը ո՞րտեղից են բերում», և ըն. նմանապէս և ուրիշ առարկաների վրայօք կարող է մի քանի օր նորահետը խօսիլ քաղցրութեամբ, և այնուհետև կարևոր է կրթել նորան կրօնական, և բարոյական սկզբունքներով, և զարդարել նորա միտքը օգտակար գաղափարներով:

Գ.

Արօնի վերաբերեալ ուսմունքը՝ այբբենարանի հետն սկսելու է (1). նախ սովորեցնել նորան ուղիղ կերպով դէմքը խաչակնքել, և տալ քանիցս անգամ կրկնել. «Յանուն Հօր, և որդւոյ, և հոգւոյն սբր»

(1) Թէև այսպիսի նախակրթութեան պարտաւորութիւնը կը վերաբերի ուսեալ մայրերին, որ սովորեցնեն իրանց խնամքով սնուած մանուկներին. ուրեմն սպասելու է ժամանակին. գուցէ մեր ազգն էլ ունենայ նոյն բաղաւորութիւնը: